ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 4, հեռ.՝ (+374 60) 830 – 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

«25» 09 2024թ.
No 01/234

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԼՈՒՍԻՆԵ ԴԱՎԹՅԱՆԻՆ
(հասցե՝ Արարատի մ., ք. Մասիս, Նոր թաղամաս, շ. 20, բն. 41)

Հարգելի՛ տիկին Դավթյան,

Կից ուղարկվում է Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2024 թվականի սեպտեմբերի 24-ի «Անհատ ձեռնարկատեր Լուսինե Դավթյանի վերաբերյալ թիվ ՀԳ-02755/24 վարույթի ժամկետը երկարաձգելու մասին» թիվ 604-Ա որոշման պատճենը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Հանձնաժողով փաստաթղթեր ներկայացնել և ստանալ, ինչպես նաև Հանձնաժողովի հետ հետագա ողջ հաղորդակցությունը կարող եք իրականացնել նաև առցանց՝ Հանձնաժողովի e-Compete էլեկտրոնային համակարգի (այսուհետ նաև՝ **Համակարգ**) միջոցով, որի համար անհրաժեշտ է գրանցվել համակարգում՝ մուտք գործելով Հանձնաժողովի պաշտոնական կայքի (www.competition.am) «Իմ էջը» բաժին, ընտրելով «Գրանցվել» հրամանը և լրացնելով անձի նույնականացման համար պահանջվող տվյալները:

Առդիր՝ «2» թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ԱՇՈՏ ՎԱՀԱՆՅԱՆ**

Կատարող՝ Արմենուհի Թադևոսյան
Անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչություն
Հեռ. (+374 60) 830-840 (245)

www.competition.am կայքում հրապարակման օրը՝ 06 նոյեմբերի 2024 թվական:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 սեպտեմբերի 2024 թվականի թիվ 604-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԼՈՒՍԻՆԵ ԴԱՎԹՅԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ ՀԳ-02755/24 ՎԱՐՈՒՅԹԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2024 թվականի սեպտեմբերի 24-ի նիստում, քննարկելով անհատ ձեռնարկատեր Լուսինե Դավթյանի (այսուհետ նաև՝ **ԱՁ Լ. Դավթյան**) վերաբերյալ թիվ ՀԳ-02755/24 վարույթի ժամկետը երկարաձգելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Հանձնաժողովը 2024 թվականի հունիսի 24-ի «Անհատ ձեռնարկատեր Լուսինե Դավթյանի կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 350-Ա որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 350-Ա որոշում**) հարուցել է թիվ ՀԳ-02755/24 վարույթը (այսուհետ նաև՝ **Վարույթ**):

Վարույթը հարուցված է «զարգացման կենտրոն» և «նախակրթարան» բառերի օգտագործմամբ գործունեություն իրականացնելու առնչությամբ ԱՁ Լ. Դավթյանի վարքագծում ինչպես առանձին, այնպես էլ համակցության մեջ անբարեխիղճ մրցակցության, այդ թվում՝ հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշների առերևույթ առկայության հիմքով:

ԱՁ Լ.Դավթյանը թիվ 350-Ա որոշումը չի ստացել, և այն վերադարձվել է «Տեղափոխված» նշումով:

Հանձնաժողովը թիվ 350-Ա որոշումը 2024 թվականի օգոստոսի 8-ին հրապարակել է «www.azdarar.am» ու «competition.am» կայքերում և 2024 թվականի օգոստոսի 13-ից այն համարվել է ԱՁ Լ. Դավթյանին պատշաճ հանձնված:

Հանձնաժողովի գլխավոր քարտուղարի 2024 թվականի օգոստոսի 29-ի թիվ 10035 գրությամբ (այսուհետ նաև՝ **թիվ 10035 գրություն**) ԱՁ Լ. Դավթյանին է ուղարկվել Հանձնաժողովի անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչության (այսուհետ նաև՝ **Պատասխանատու ստորաբաժանում**) կողմից կազմված «Անհատ ձեռնարկատեր Լուսինե Դավթյանի վերաբերյալ թիվ ՀԳ-02755/24 վարույթում առկա փաստական հանգամանքների մասին» տեղեկանքը (այսուհետ նաև՝ **Տեղեկանք**), և ԱՁ Լ. Դավթյանին առաջարկվել է Տեղեկանքի առնչությամբ ներկայացնել գրավոր դիրքորոշում, որը սույն որոշման ընդունման պահի դրությամբ Հանձնաժողովում չի ստացվել:

Հաշվի առնելով, որ Վարույթի ժամկետը լրանում է 2024 թվականի սեպտեմբերի 24-ին, իսկ Վարույթի շրջանակում առկա փաստական հանգամանքները, առկայության դեպքում Վարույթով պատասխանողի դիրքորոշումների հաշվառմամբ վերլուծելու, անհրաժեշտության դեպքում հավելյալ տեղեկատվություն ձեռքբերելու, ինչպես նաև Վարույթի շրջանակում գործի բազմակողմանի և լրիվ քննությանն ուղղված այլ գործողություններ կատարելու համար Վարույթի իրականացման՝ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքով (այսուհետ նաև՝ **Օրենք**) սահմանված եռամսյա ժամկետը բավարար չէ՝ Պատասխանատու ստորաբաժանումը 2024 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ ՄՊՀ-011041 զեկուցագրով, ի թիվս այլնի, առաջարկել է Վարույթի ժամկետը 2024 թվականի սեպտեմբերի 24-ից եռամսյա ժամկետով երկարաձգել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ Վարույթի ժամկետն անհրաժեշտ է եռամսյա ժամկետով երկարաձգել:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 63-րդ հոդվածի 1-ին, 6-րդ մասերով, 42-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. 2024 թվականի սեպտեմբերի 24-ից եռամսյա ժամկետով երկարաձգել անհատ ձեռնարկատեր Լուսինե Դավթյանի վերաբերյալ թիվ ՀԳ-02755/24 վարույթի ժամկետը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՆԱԽԱԳԱՀԻՆ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՓՈԽԱՐԻՆՈՂ Տ. ՄԱՐԿՈՍՅԱՆ

2024 թ. սեպտեմբերի 24
Երևան